



## «Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

## ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ «Ընտանիքի հոգեբանություն, կոնֆլիկտներ»

Առարկան՝ դասվար

Հետազոտող ուսուցիչ՝ Դոնարա Հակոբյան

Ուսումնական հաստատություն՝ «Երևանի հ.107 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Երևան 2023

## Բովանդակություն

Ներածություն .....	3
§1. Ընտանիքը որպես հասարակության բջիջ և բարոյական արժեք.....	5
1.1 Ընտանիքը որպես սոցիալական խումբ.....	5
1.2 Ընտանիքի ընկալումը հայ իրականության մեջ.....	7
§2. Ընտանեկան կոնֆլիկտները եվ դրանց հաղթահարման ուղիները.....	10
§3. Ընտանեկան կոնֆլիկտների ազդեցությունը երեխայի անձի ձեվավորման վրա...	14
Եզրակացություն.....	17
Գրականության ցանկ.....	18

## Ներածություն

Ազգային ինքնագիտակցության պահպանման գլխավոր սոցիալական ինստիտուտն ընտանիքն է: Ընտանիքն է պահպանում ազգային ավանդույթները, տոհմային առաքինությունները, լեզուն և կրոնը, ազգի բարոյական հատկանիշները: Որքան ամուր է ընտանիքը, այնքան անսասան է ազգը:

Երեխայի զարգացման վրա ծնողների ազդեցությունը շատ մեծ է: Երեխաները, որոնք մեծանում են սիրո և փոխըմբռնման մթնոլորտում, ունեն ավելի քիչ առողջական խնդիրներ, դժվարություններ դպրոցում սովորելիս, հասակակիցների հետ շփվելիս և հակառակը, որպես կանոն, երեխա-ծնող հարաբերությունների խախտումը հանգեցնում է տարբեր հոգեբանական խնդիրների և բարոյական ծեղանկների:

Փոքր երեխայի համար ընտանիքը մի ամբողջ աշխարհ է, որտեղ նա ապրում է, գործում, անում բացահայտումներ, սովորում է սիրել, ատել, ուրախանալ, համակրել:

Բոլոր ժամանակներում էլ ընտանիքում տարբեր պատճառներով ծագել են կոնֆլիկտներ: Հաճախակի կոնֆլիկտներն ազդում են ընտանիքի հոգեբանական մթնոլորտի վրա, քայքայում հարաբերությունները, ընտանիքի անդամների մեջ առաջացնում սթրես, լարվածություն, տհաճ հոգեվիճակներ:

Ընտանեկան կոնֆլիկտները մեծ վնաս են հասցնում երեխայի առողջությանը, նրա հոգեկան աշխարհին, խոչընդոտում են նրա անհատականության զարգացմանը, և հանգեցնում են այլ ծանր սոցիալական հետևանքների: Մեր օրերում այն դարձել է լուրջ սոցիալական ու համընդհանուր խնդիր:

Ընտանիքի հոգեբանության տեսական հիմք են դարձել հետևյալ հետազոտությունները. սոցիալական հոգեբանություն, անձի հոգեբանություն, զարգացման հոգեբանություն, կրթական հոգեբանություն և կլինիկական հոգեբանություն:

**Հետազոտական աշխատանքի ուսումնասիրության առարկան է ընտանիքը, ընտանիքում առկա կոնֆլիկտները, դրանց ազդեցությունը երեխայի վրա և լուծման ուղիները:**

**Հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել ընտանիքի խնդիրը և նրա դաստիարակչական ներուժը:**

**Հետազոտության խնդիրներն են.**

1. Ուսումնասիրել ընտանիքի հոգեբանության վերաբերյալ տեսական գրականությունը:

2. Ուսումնասիրել ընտանիքը որպես սոցիալական խումբ և նրա ընկալումը հայ իրականության մեջ:
3. Բացահայտել ընտանեկան հարաբերություններում կոնֆլիկտների լուծման ուղիները:  
Հետազոտական աշխատանքը բաղկացած է բովանդակությունից, ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

## §1. Ընտանիքը որպես հասարակության բջիջ և բարոյական արժեք

### 1.1 Ընտանիքը որպես սոցիալական խումբ

Հանրահայտ է ընտանիքի տեղն ու դերը հասարակության զարգացման, նրա արժեքների ստեղծման ու վերարտադրության գործում: Յուրաքանչյուր ընտանիք հասարակության մեջ ունի իր կարգավիճակը և համապատասխան դերը:

Ընտանիքը սոցիալական խումբ է, որը կազմված է ծնողներից, նրանց զավակներից և այլ հարազատներից:

Ընտանիքը՝ որպես սոցիալական խումբ, բնութագրվում է հետևյալ հիմնական սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններով.

1. Ընտանիքը մարդկանց այնպիսի փոքր խումբ է, որի անդամներն անմիջական և կրկնվող հարաբերությունների մեջ են միմյանց հետ,
2. Այն հարաբերականորեն կայուն սոցիալական խումբ է, որի անդամների փոխհարաբերությունները ոչ թե անցողիկ են, այլ երկարատև և ամուր,
3. Այնպիսի խումբ է, որի անդամները, որպես կանոն, ապրում են համատեղ նույն հարկի տակ՝ միևնույն տանը կամ բնակարանում,
4. Ընտանիքն այնպիսի խումբ է, որի անդամները միմյանց կապված են ամուսնական կամ արյունակցական կապերով: Ընտանիքը կարող է ունենալ նաև որդեգրված անդամներ,
5. Ընտանիքն անհատական կենցաղի կազմակերպման լավագույն ձևն է:

Առանձնացվում են ժամանակակից ընտանիքի առավել քան քառասուն տարատեսակներ, որոնք պայմանավորված են ազգային, մշակութային, կրոնական, մասնագիտական և այլ առանձնահատկություններով: Մոնոգամիայի առաջնային ձևը համարվել է նահապետական ընտանիքը, որը բնորոշվում է տղամարդու դոմինանտող իշխանությամբ: Որոշ ձևափոխություններով այս ընտանիքի այս տեսակն այսօր էլ հանդիպում է: Հասարակության զարգացմանը զուգընթաց ավանդական նահապետական ընտանիքը փոփոխության է ենթարկվում, առաջ է գալիս նուկլեար /միջուկային/ ընտանիքը:

**Միջուկային /կամ բջջային, նուկլեար/ ընտանիք:** Հետևյալ տեսակին պատկանող ընտանիքները կազմված են միայն հիմնական անդամներից՝ ծնողներից, և նրանցից սերած զավակներից: Ի դեպ, այս ընտանիքը կարող է լինել ինչպես անզավակ, այնպես էլ բազմաթիվ երեխաներ ունեցող: Նման ընտանիքներում հարաբերությունները սերտ են, անմիջական: Նուկլեար ընտանիքի մասին առաջին անգամ խոսել է ամերիկացի սոցիոլոգ Ժ. Մուրդոկը 1949 թ.:

**Ընդլայնված /կամ բարդ/ ընտանիք:** Ընտանիքի այն տեսակն է, որի կազմի մեջ, բացի ծնողներից և զավակներից, մտնում են նաև պապը, տատը և այլ հարազատներ: Ընդլայնված ընտանիքի մյուս տարբերակն այն է, երբ երկու եղբայրների ընտանիքները միասին ապրում են նույն հարկի տակ: Նշենք որ, ընտանիքի այսպիսի տեսակն այսօր էլ հանդիպում է Հայաստանում:

**Հավաք /կոմպակտ/ ընտանիք:** Այս տեսակի ընտանիքի բոլոր անդամներն ապրում են միասին և որոշակի սահմանազատված տեղում, օրինակ՝ մեկ բնակարանում:

**Ընտանիքները կարող են լինել լրիվ և ոչ լրիվ:** Լրիվ կոչվում են այն ընտանիքները, որտեղ երեխաներն ապրում են երկու ծնողների հետ: Ոչ լրիվ է կոչվում ընտանիքի այն տեսակը, որտեղ ծնողներից մեկը բացակայում է:

Ներկայումս գոյություն ունեն ընտանիքի տեսակների բազմաթիվ դասակարգումներ: Ներկայացնենք դրանցից մի քանիսը:

**Ըստ ամուսինների ընտանեկան փորձի առանձնացվում են հետևյալ ընտանիքները՝**

- Նորապսակների ընտանիք,
- Երիտասարդ ընտանիք,
- Երեխայի սպասող ընտանիք,
- Միջին ամուսնական տարիքի ընտանիք /համատեղ կյանքի 3-10 տարի/,
- Ավագ ամուսնական տարիքի ընտանիք /համատեղ կյանքի 10-20 տարի/,
- Տարեց ընտանեկան զույգեր:

**Ըստ երեխաների քանակի ընտանիքները լինում են՝**

- Առանց երեխա ընտանիքներ,
- Միաժառանգ ընտանիքներ,
- Քիչ երեխաներ ունեցող ընտանիքներ /1-2 երեխա/,
- Բազմազավակ ընտանիք /3 և ավելի երեխաներ/:

Ըստ կազմի ընտանիքները լինում են.

- Ոչ լրիվ ընտանիք,
- Միջուկային կամ պարզ ընտանիք,
- Ընդլայնված կամ բարդ ընտանիք,
- Մեծ ընտանիք /կազմված է 3 և ավելի ամուսնական զույգերից/:

**Ըստ ընտանիքի ղեկավարման տեսակի ընտանիքները լինում են.**

- Իրավահավասար /էգալիտար/ ընտանիքներ,
- Ավտորիտար ընտանիքներ:

**Ըստ ընտանիքում հարաբերությունների որակի ընտանիքները լինում են.**

- Բարենպաստ,

- Կայուն,
- Պրոբլեմային,
- Կոնֆլիկտային,
- Սոցիալակապես անբարենպաստ,
- Անկազմակերպ:

Այսօր հայ ընտանիքները հիմնականում միջուկային են: Դրանց թիվը գնալով մեծանում է: Պատմական զարգացման հետևանքով քրիստոնեական աշխարհում գրեթե ամենուրեք անցում է կատարում միջուկային ընտանիքին: Սակայն դա դեռ չի նշանակում, որ միջուկայինն ընտանիքի լավագույն տեսակն է: Այն ունի լուրջ թերություններ: Դրանցից մեկը միջուկային ընտանիքներում ամուսինների կողմից իրենց ծնողական դերերի կատարման վրա հսկողության բացակայությունն է կամ թուլությունը: Եթե պապերն ու տատերը առանձին են ապրում, ապա բնական է, որ նրանք չեն կարող ամենօրյա հսկողության տակ պահել երիտասարդ ամուսինների ծնողական դերակատարումները, նրանց փոխանցել իրենց փորձը, զբաղվել թոռնիկների դաստիարակությամբ: Այս թերության հետևանքներից մեկը երեխաների դաստիարակության գործում ծնողների կողմից թույլ տրվող սխալներն են, դաժանությունը, թողտվությունը, գերխնամակալությունը և այլն:

Մյուս լուրջ թերությունը այս տեսակի ընտանիքներից շատերի տնտեսական, ֆինանսական թուլությունն է, որի հետևանքով դրանք քայքայվում են են՝ հանգեցնելով ամուսնալուծությունների թվի աննախադեպ մեծացմանը Եվրոպայում, ԱՄՆ-ում, ԱՊՀ բոլոր երկրներում:

## 1.2 Ընտանիքի ընկալումը հայ իրականության մեջ

Ազգային ինքնագիտակցության պահպանման գլխավոր սոցիալական ինստիտուտն ընտանիքն է: Ընտանիքն է պահպանում ազգային ավանդույթները, տոհմային առաքինությունները, լեզուն և կրոնը, ազգի բարոյական հատկանիշները: Բացի այդ, ազգային ոգու ամուր հենարանն է, ինչից ժողովրդին չի կարելի զրկել: Որքան ամուր է ընտանիքը, այնքան անսասան է ազգը: Անշուշտ, սերունդները փոխվում են և նրանց հետ նաև որոշակի փոփոխության են ենթարկվում ազգային ավանդույթներն ու սովորույթները. դրանցից որոշները մոռեցվում են, ծագում են նորերը, մի մասն էլ վերափոխվում է:

Մեզ՝ հայերիս համար, ընտանքը եղել և մնում է ազգապահպանման, ազգային ինքնությունը հաստատելու կռվան:

Երեխան ընտանիքի ավանդույթների կրողն ու շարունակողն է: Այդ ավանդույթներում կուտակված է հասարակական փորձը, որի միջոցով ձևավորվում է ազգային դիմագիծը: Հետևաբար, յուրաքանչյուր մարդու կայացման վրա ընտանիքը մեծ ներգործություն է ունենում:

Հայ ընտանիքում երեխայի ծնունդը հսկայական ուրախություն է պատճառում ծնողներին, ովքեր իրենց զավակի մեջ տեսնում են օջախի կրակը վառ պահողին:

Հայ ընտանիքում ավանդույթներն ու սովորույթները ձևավորվել են դարերի ընթացքում: Կուտակվել և սերունդներին է փոխանցվել երեխաների ընտանեկան դաստիարակության, ներընտանեկան փոխհարաբերությունների, ազգային ծեսերի, ավանդույթների հարուստ փորձը: Ավանդույթներից որոշները ժամանակի ընթացքում հղկվել, գեղեցկացել են, որոշները դարձել են ժամանակի պահանջներին համահունչ, մյուսներն աստիճանաբար մոռացվել են՝ փոխարինվելով նորերով: Այդ ավանդույթներում և սովորույթներում կուտակված փորձն իր դրոշմն է թողել հայ ընտանիքի առանձնահատկությունների վրա:

Անհերքելի է հայ իրականության մեջ արմատացած հումանիստական վերաբերմունքը երեխայի նկատմամբ: Սա պայմանավորված է նաև մեր ազգային յուրահատուկ ճակատագրով:

Հայ իրականության մեջ ընտանիքի ընկալումը թելադրում է որոշակի ազգային դիրքորոշում՝ կապված կնոջ և տղամարդու դերային փոխհարաբերությունների հետ: Ինչպես Կովկասի մյուս ժողովուրդների, այնպես էլ հայերի մոտ պահպանվում է տան ավագ տղամարդուն ընտանիքի գլխավորը համարելու ավանդույթը: Ընտանեկան կյանքի նյութական բարեկեցության ապահովման հիմնական հոգսը նրա ուսերին է: Կնոջ դերը հայ ընտանիքում տիպական ձևով ընդգծում է հայերիս մոտ արմատացած վաղեմի ասացվածքը. “Կինը օջախի պահպանն է”: Ինչպես գյուղական, այնպես էլ



քաղաքային ընտանիքներում տնային տնտեսության վարումը, երեխաների խնամքը, դաստիարակությանն ու կրթությունը կանանց գործն է: Տանը մեծ հեղինակություն է վայելում տարիքով ավագ կինը: Մեծ մասամբ հենց նա է գլխավորում այն ընտանիքը, ուր ամուսնացած տղան ապրում է մոր հետ:

Ընտանիքում ժողովրդավարացման աստիճանի մասին կարելի է դատել՝ ելնելով ընտանեկան կարևոր հարցերում ընտանիքի անդամների մասնակցության չափից:

## §2. Ընտանեկան կոնֆլիկտները եվ դրանց հաղթահարման ուղիները

Ցանկացած ընտանիքում վեճերն ու կոնֆլիկտներն անխուսափելի են:

Ընտանեկան վեճերն իրենց բնույթով կարող են լինել պերմանենտ (անընդհատ):  
Դրանք հիմնականում քրեածին, կոնֆլիկտածին, անբարենպաստ ընտանիքներն են:

Ցանկացած վեճի հիմքում ընկած է սեփական կարծիքը պաշտպանելու, սեփական անհատականությունը պահպանելու մղումը:

Մարդը աշխատում է, հնարավորինս վիրավորելով դիմացինին, բարձրացնել իր "Ես"-ի արժեքը: Կոնֆլիկտի հիմնական պատճառը անձի որևէ պահանջմունքի չբավարարված լինելն է՝ սկսած ֆիզիկական, կենսաբանական, ֆիզիոլոգիական պահանջմունքներից մինչև հոգևոր պահանջմունքները:

Կոնֆլիկտների մեխանիզմը հասկանալու համար անհրաժեշտ է առանձնացնել պատկերացումների 3 համակարգ՝

- էզոցենտրիկ համակարգ, որի հիմքում ընկած է սեփական Ես-ը, այլ մարդիկ կամ առարկաները հանդես են գալիս որպես օգտակար գործիք կամ խոչընդոտ:
- Ալլացենտրիկ համակարգ, որի դեպքում ուշադրությունը կենտրոնացվում է ուրիշի վրա:
- Սոցիոցենտրիկ համակարգ, երբ մարդը կարևորում է սոցիալական միջավայրը, հասարակության կարծիքը:

Ընտանեկան կյանքում կոնֆլիկտային են համարվում հետևյալ շրջանները՝

- Միմյանց հարմարվելու փուլ՝ ամուսնական կյանքի առաջին տարին է, երբ ձևավորվում են նոր որակի հարաբերություններ, նոր հոգևոր արժեքներ:
- Երեխա ունենալու փուլ՝ երեխաների ծնունդը բարդացնում է ամուսինների մասնագիտական աճի հնարավորությունները, քիչ ժամանակ է տրամադրվում անձնական գրավիչ գործունեությանը (հոբբի), նկատվում է սեռական ակտիվության ժամանակավոր նվազում՝ կապված երեխայի անընդհատ խնամքի և կնոջ հոգնածության հետ:
- Բախման փուլ՝ երեխաների դաստիարակության վերաբերյալ ամուսինների և նրանց ծնողների հայացքների, տեսակետների բախումը:
- Միապաղաղության կամ միջին ամուսնական տարիքի փուլ՝ այս շրջանը երբեմն անվանում են նաև զգացմունքների հագեցվածության փուլ:
- Իվոլուցիոն կամ միայնակության զգացման փուլ՝ այս շրջանը կարող է առաջանալ 18-24 տարի համատեղ կյանքով ապրած ամուսինների մոտ, և դա հաճախ համընկնում է ինվոլուցիոն շրջանի հետ: Հնարավոր է, որ ձևավորվի միայնակության զգացում՝ կապված երեխաների հեռանալու հետ: Այս փուլում

հսկայական նշանակություն ունեն արտաքին գործոնները՝ նյութական վիճակի վատթարացումը, աշխատանքի անցնելու անհնարինությունը, սեփական բնակարանի բացակայությունը և այլն:

Ընտանեկան անբավարարվածության վիճակն առաջանում է կոնֆլիկտային իրավիճակների արդյունքում, երբ տարածայնություններ են առաջանում անձի սպասումների և նրա իրական կյանքի միջև: Կոնֆլիկտից կոնֆլիկտ կուտակվելով՝ այսպիսի անբավարարվածությունը արտահայտվում է հուզական պոռթկումների և հիստերիկ դրսևորումների մեջ, որոնց հաճախացումը կարող է լրջորեն խաթարել ընտանիքի ամրությունը:

Բազմաթիվ կոնֆլիկտներ առաջանում են ամուսնական դերերը տարբեր կերպ ըմբռնելու հետևանքով: Ինչպես գիտնեք, ընտանիքի յուրաքանչյուր անդամ կատարում է մի շարք դերեր: Դերերի բազմազանության պայմաններում անհամաձայնություններն ու բախումներն անխուսափելի են: Դերային կոնֆլիկտները լինում են 3 հիմնական տեսակների.

- Ներդերային կոնֆլիկտներ՝ մարդու դերային վարքին ներկայացվում են տարբեր սպասումներ: Այսպիսի սպասումներ ներկայացնում է, մի կողմից, դերակատարը, մյուս կողմից, իր համար ռեֆերենտային անհատները և սոցիալական խմբերը: Եթե այդ սպասումների միջև հակասություններ կան, ապա առաջանում է ներդերային կոնֆլիկտ:
- Միջդերային կոնֆլիկտները տարբեր դերերի պահանջների անհամաձայնեցվածության արդյունք են, ասենք, երբ տվյալ անձը միևնույն մարդու զավակն է և աշակերտը, այլ օրինակ՝ տվյալ անձի նկատմամբ ամուսինը մի տեսակի պահանջներ է դնում, իսկ ամուսնու ծնողներն՝ այլ տեսակի: Ընտանեկան միջդերային կոնֆլիկտների հիմնական պատճառներից մեկն այն է, որ ամուսինները միշտ ձգտում են միմյանց թելադրել, թե ինչ պետք է անել: Այսինքն՝ նրանց միջև միշտ առկա է պայքար հանուն իշխանության, հանուն որոշումներ կայացնելու իրավունքի: Երբ ամուսիններն իրենց դերերը սխալ են հասկանում, ապա նրանց միջև կոնֆլիկտներն անխուսափելի են:
- Անձի ու նրա ստանձնած դերի միջև առաջացող կոնֆլիկտ /անձդեր տիպի կոնֆլիկտ/ հիմնականում առաջանում է այն դեպքում, երբ անձի հնարավորությունները չեն համապատասխանում դերի պահանջներին: Օրինակ՝ տան գլխավորը պետք է կարողանա արագ և ճիշտ որոշումներ կայացնել, սակայն նա՝ որպես մարդ, ինքնուրույն չէ, ճկուն միտք չունի:

Միջամուսնական կոնֆլիկտների առաջացումն ավելի հավանական է դառնում հետևյալ պայմանների առկայության դեպքում.

1. ամուսինները տարածականորեն շատ մոտ են ապրում ծնողների ընտանիքներին,
2. ամուսինների միջև կան ռասայական, ազգային, կրոնական, դասակարգային տարբերություններ դրանք ի սկզբանե անհամատեղելի զույգեր են, .
3. ամուսինների կրթական մակարդակները շատ տարբեր են,
4. ամուսինները կախում ունեն ծնողների ընտանիքներից,
5. երիտասարդներն ամուսնացել են ծանոթանալուց հետո շատ կարճ, կամ, ընդհակառակը, շատ երկար ժամանակ անց: Որոշ մասնագետներ լավագույն ժամանակահատված են համարում 6 ամսից մինչև 3 տարին ընկած ժամանակահատվածը: Այդ սահմաններից դուրս կոնֆլիկտների առաջացման հավանականությունը մեծանում է,
6. ծնողների ընտանիքները կայուն չեն եղել,
7. հղիությունը սկսվել է մինչև ամուսնական պայմանագիրը կնքելը կամ ամուսնական կյանքի առաջին տարվա ընթացքում,
8. ամուսինները զգայուն չեն միմյանց սեռական ցանկությունների նկատմամբ,
9. կնոջ կամ տղամարդու դերը նրանց համար տհաճ է կատարելը,
10. վիճում են աշխատանքի բաժանման հարցերի շուրջ:

**Ամուսինների միջև ծագող կոնֆլիկտները հնարավոր է հաղթահարել՝ պահպանելով հետևյալ կանոնները:**

- Անհրաժեշտ է բացահայտ ու անկեղծորեն քննարկել ծագող տարածայնություններն ու կոնֆլիկտները, տեսնել, թե յուրաքանչյուրն ինչ չբավարարված ցանկություններ ունի և ինչպես կարելի է դրանք հաղթահարել: Պետք է ոչ միայն խոսել իմանալ, այլ անհրաժեշտ է սովորել ուրիշին լսելու արվեստը, պետք է մտնել դիմացինի վիճակի մեջ, կարեկցել նրան, իսկապես ընկալել նրա մտքերն ու ապրումները, վարքի իրական դրդապատճառները: Անհրաժեշտ է հացեր տալ, հետաքրքրվել ամուսնու վիճակով, որպեսզի նա լիովին ինքնաբացահայտվի:
- Եթե կոնֆլիկտը սուր է, ապա պետք է թույլ տալ, որ ամուսինն ասի նաև դիմացինի համար տհաճ բաներ: Ամուսնուն այնպես պետք է քննադատել, որպեսզի նա անձնական վիրավորանք չստանա:
- Խորհուրդ է տրվում մեղմացնել ամուսիններից մեկի իշխանությունը մյուսի նկատմամբ, եթե այն չափից ավելի է դարձել: Եթե մեկը լրիվ տիրապետում է մյուսին, ապա ենթարկվողը անբավարարվածության, զայրույթի զգացում է ունենում: Նման հարաբերությունները սովորաբար երկար չեն տևում: Խզումը կանխելու նպատակով անհրաժեշտ է ստեղծել քիչ թե շատ հավասար հարաբերություններ:

- Կոնֆլիկտները կանխելու լավ միջոց է ամենօրյա պարտականությունների բաշխումը: Ընտանիքում պարտականությունների բաշխումը պետք է լինի կոնկրետ՝ հաշվի առնելով ամուսիններից յուրաքանչյուրի աշխատանքի բնույթը, զբաղվածությունը: Չպետք է տուժեն նաև երեխաները:
- Ամուսնական կյանքի կոնֆլիկտները կանխելու նպատակով պետք է գիտակցորեն մեծացնել փոխադարձաբար հաճելի գործողությունների թիվը: Խոսքը միայն նվերների մասին չէ: Ուշադրությամբ լսելը, ընդհանրապես ուշադիր վերաբերմունքը, քնքշանքը, խնամքը, ժպիտը, կատակը և այլն:
- Կոնֆլիկտը համատեղ քննարկելիս և լուծելիս չպետք է ամուսնու մեջ վախ և մեղավորության զգացում առաջացնել, վիրավորել նրա անձը: Պետք է քննարկել բուն պրոբլեմը՝ աշխատելով կանխել դրա կրկնությունը: Անհրաժեշտ է ամուսնուն ուղղակի ասել, թե նրա որ գործողություններն ու առաջարկություններն են տհաճ:
- Անհրաժեշտ է հանդուրժող լինել քննադատության նկատմամբ, եթե, իհարկե, այն չափից ավելին չէ և չի վիրավորում դիմացինի անձը:

### §3. Ընտանեկան կոնֆլիկտների ազդեցությունը երեխայի անձի ձևավորման վրա

Ընտանիքը տղամարդու և կնոջ, ծնողների և երեխաների միջև հարաբերությունների համակարգ է, որը հիմնված է պատմականորեն ձևավորված ամուսնության կամ արյունակցական կապի հիման վրա: Ընտանիքն առաջնային խումբ է, որովհետև նրա անդամների հարաբերությունները շատ սերտ են, հուզականությամբ և մարմնային շփումով հագեցած:

Առողջ ընտանիքներում հարաբերությունները սերտ են ու անմիջական, ընտանիքի անդամները մշտապես կապի մեջ են, հաճախակի են շփվում, լավ գիտեն միմյանց, ներընտանեկան հարաբերություններն առավել հավասարակշռված են և ներդաշնակ: Ընտանիքն այն առաջնային միջավայրն է, որտեղ աճում, զարգանում և դաստիարակվում է երեխան, ուստի նաև այստեղ են այն առաջին դպրոցն ու ուսուցիցները, որտեղ և ունի օգնությամբ նա սովորում է ապրել: Երեխայի կյանքի յուրաքանչյուր փուլում ընտանիքի դաստիարակչական գործառույթը շատ կարևոր է, սակայն գաղտնիք չէ, որ այն առավել մեծ կարևորություն է ստանում դեռահասության բարդ, երբեմն ճգնաժամային շրջանում:

Ընտանիքում ձևավորվում են երեխայի բնավորությունը, ինքնագիտակցությունը, ինքնագնահատականը, բարոյական պատկերացումները, սոցիալական դիրքորոշումները, երեխան յուրացնում է վարքի կանոնները, տեղի է ունենում անձի սոցիալականացում: Վերջին ժամանակներում ընտանեկան հարաբերություններն էական փոփոխությունների են ենթարկվել:

Շատ կարևոր է ուսումնասիրել ընտանեկան կոնֆլիկտների առաջացման պատճառները և դրանց ազդեցությունը երեխայի անձի ներդաշնակ ձևավորման վրա:

Ընտանիքում վեճերի պատճառները կարող են լինել բազմազան՝ սեռական հարաբերություններում առկա խնդիրներ, չարդարացված սպասումներ, խուսափումը պատասխանատվությունից, սոցիալ-տնտեսական պայմաններ, դաստիարակության գործընթացի մեջ առկա ծայրահեղ մոտեցումներ և այլն: Երբ ծնողները տվյալ հարցերը չեն կարողանում ժամանակին լուծել, իրավիճակը վեր է ածվում կոնֆլիկտային, կրկնվող փակ շղթայի, կարող են կիրառվել հոգեբանական և ֆիզիկական բռնություն: Այս ամենը վկայում է մեծահասակների՝ կոնֆլիկտները գրագետ լուծելու հմտությունների պակասի մասին: Յուրաքանչյուր անձ՝ հատկապես անչափահասը, ապրելով այս միջավայրում, կարող է գերապրումներ ունենալ, տրավմատիկ կենսափորձ ձեռք բերել, ձևավորել անվստահություն աշխարհի հանդեպ, զոհի կամ ագրեսորի հոգեբանություն:

Երեխան, որը մշտապես գտնվում է լարված, սթրեսային վիճակում, ունենում է ծանր բնավորություն, չի կարողանում կապեր հաստատել հասակակիցների և մեծահասակների հետ, ունենում է ոչ ադեկվատ, ցածր ինքնագնահատական:

Ծնողների վեճերը սիրո բացակայության, հուսահատության, անպաշտպանության, տազնապի զգացման հիմք կարող են հանդիսանալ: Հարաբերություններն առանց կոնֆլիկտի հնարավոր չեն: Խնդիրը կոնֆլիկտների լուծման տարբերակների, հուզականության դրսևորումների չափի մեջ է: Սակայն կարող են պատահել նաև բուռն պոռթկումներ: Մարդիկ տարբեր են, խառնվածքներն ու արձագանքները՝ նույնպես: Կոնֆլիկտային իրադրության մեջ կարևոր է յուրաքանչյուրի դերը: Երեխաներն իրավունք ունեն արտահայտել իրենց կարծիքը և որոշակի դեր խաղալ խնդրի լուծման գործում: Պատահում է նաև, որ երեխաների կարծիքը անտեսվում է, ընտանիքի անդամները գտնվում են սուր կոնֆլիկտային իրադրության մեջ, և երեխային սթրեսից խուսափելու համար մնում է պարզապես հեռու կանգնել իրադրությունից: Իհարկե, այս դեպքում էլ անտարբերություն է առաջանում: Ելքը մեծահասակների գիտակցական մոտեցումն է:

Կոնֆլիկտային հարաբերություններով ընտանիքներում նյութական և կրթական անհրաժեշտությունը, նորմերի իմացությունն ի զորու չեն կանխելու պարբերաբար ծագող անախորժությունները: Ծնողները մեկ միմյանց հետ ջերմ են, հոգատար, մեկ էլ անպատվում են իրար, իրարից բաժանվում: Ամուսինների միջև կոնֆլիկտների պատճառը դերաբաշխման մեջ կարող է լինել. հայրը ձգտում է ստանձնել ընտանիքի ղեկավարման դերը, իսկ մայրը պահանջում է փոխհամաձայնեցում, ըմբռնում: Կոնֆլիկտն առաջանում է, երբ ամուսինները տարակարծիք են դաստիարակման հարցում, և նրանցից յուրաքանչյուրը ձգտում է իր ազդեցության տակ պահել երեխային: Ընտանիքի նման անբարենպաստությունը ներգործում է երեխայի ներհոգեկան զարգացման վաղ օնթոգենեզում: Հասունացման հետ մեկտեղ, ծնողների ներգործությունների նկատմամբ երեխայի հակազդումները համարժեք բնույթ չեն կրում: Ի վերջո, երեխայի մոտ մշակվում է նեգատիվ վերաբերմունք, ինչն էլ վկայում է նրանց միջև արդեն ստեղծվող պատնեշի մասին: Սոցիալապես ոչ լիարժեք ընտանիքները բնութագրվում են նյութական ցածր մակարդակով: Այսպիսի ընտանիքներում կարող է բացակայել ծնողներից որևէ մեկը, կամ կրթական մակարդակը շատ ցածր լինել, սակայն դա չի նշանակում, որ նման ընտանիքներում մեծացող երեխաներն ավելի շատ են ընդունակ բացասական ներգործությունների նկատմամբ:

Էականն այն է, թե ինչ բնույթ ունի այդ ընտանիքների հոգեբանական մթնոլորտը, որից էլ կախված է երեխայի նորմալ զարգացումը: Ակնհայտ է, որ ընտանիքի

անբարենպաստությունն ինքնին սթրեսածին, կոնֆլիկտածին է և առաջացնում է դաստիարակչական բնույթի շատ հիմնախնդիրներ: Երեխան ամենավաղ մանկությունից ընկալում է ծնողների ապրելակերպը, նրանց միջև տիրող հարաբերությունները: Ընտանիքում երեխայի կյանքի բարոյահոգեբանական մթնոլորտը հսկայական նշանակություն ունի նրա բարոյական զգացմունքների ձևավորման վրա: Երբ ծնողների միջև հաստատվում են ջերմ, բարիդրացիական հարաբերություններ, երեխան իրեն երջանիկ է զգում: Ծնողների սերը երեխայի մեջ ձևավորում է մարդկանց նկատմամբ բարի վերաբերմունք: Կոպտությունը երեխայի նկատմամբ նողկալի է:

Այսպիսով այն ընտանիքներում, որտեղ տիրում են կոնֆլիկտներ, ծնողների սոցիալ-հոգեբանական թերաճ, հիվանդություններ, վերջինները զրկում են երեխային լիարժեք շփումից:



## Եզրակածություն

Ընդհանրացնելով կատարած աշխատանքը՝ կարող ենք եզրակացնել, որ ցանկացած ընտանիքում վեճերն ու կոնֆլիկտներն անխուսափելի են: Հաճախակի կոնֆլիկտներն ազդում են ընտանիքի հոգեբանական մթնոլորտի վրա, քայքայում հարաբերությունները, ընտանիքի անդամների մեջ առաջացնում սթրես, լարվածություն, տհաճ հոգեվիճակներ:

Ընտանեկան կոնֆլիկտները մեծ վնաս են հասցնում երեխայի առողջությանը, նրա հոգեկան աշխարհին, խոչընդոտում են նրա անհատականության զարգացմանը, և հանգեցնում են այլ ծանր սոցիալական հետևանքների:

Յուրաքանչյուր մեծահասակ ամուսնական զույգ պետք է գիտակցի, որ պատասխանատվություն է կրում ձևավորելու և դաստիարակելու առողջ երեխա:

Այդ պատճառով ընտանիքում պետք է.

1. անհրաժեշտ է բացահայտ ու անկեղծորեն քննարկել ծագող տարաձայնություններն ու կոնֆլիկտները;
2. կոնֆլիկտների թիվը հասցնել նվազագույնի;
3. ստեղծել խաղաղ, հանգիստ մթնոլորտ երեխայի ֆիզիկական և հոգեկան զարգացման համար;
4. բարիդրացիական հարաբերություններ հաստատել ինչպես երեխայի, այնպես էլ ընտանիքի բոլոր անդամների հետ՝ հիմնված սիրո և հարգանքի վրա:

Այսպիսով այն ընտանիքներում, որտեղ տիրում են կոնֆլիկտներ, ծնողների սոցիալ-հոգեբանական թերաձ, հիվանդություններ, վերջինները զրկում են երեխային լիարժեք շփումից: Երեխան, որը մշտապես գտնվում է լարված, սթրեսային վիճակում, ունենում է ծանր բնավորություն, չի կարողանում կապեր հաստատել հասակակիցների և մեծահասակների հետ, ունենում է ոչ ադեկվատ, ցածր ինքնագնահատական:

## Գրականության ցանկ

1. Սեդրակյան Ս.Ա. Ընտանիքի հոգեբանություն. Երևան: Ուրարտու համալս., 2010:
2. Նալչաջյան Ա., Մկրտչյան Ս. Ընտանիքի հոգեբանություն, Երևան, 2001:
3. Шнейдер Л. Б. Психология семейных отношений. Курс лекций. М., 2000.
4. Лысова А. В. Психология семьи. Часть 2: Учебное пособие. Владивосток, 2003.
5. Ильин Е.П. Дифференциальная психофизиология мужчины и женщины. СПб.: Питер, 2003.
6. Гребенников И. В. “Основы семейной жизни”, Москва, “Просвещение”, 1991.
7. Ковалев С. В. “Психология современной семьи”, Москва, “Просвещение”, 1988.